ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ*

1. Որակավորման քննությունները գիտական աստիճանաշնորհման անբաժանելի մասն են, որոնց նպատակը հայցորդի՝ որպես ապագա գիտնականի մասնագիտական պատրաստվածության ստուգումն է:

Սահմանվում են որակավորման քննություններ մասնագիտությունից, փիլիսոփայությունից ՝ օտար լեզվից, ինչպես նա՝ ստուգարք՝ ինֆորմատիկայից:

Որակավորման քննություններ հանձնում են այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթության որակավորման հետ՝յալ աստիճանները՝ դիպլոմավորված մասնագետ ՝ մագիստրոս: Քննությունը մասնագիտությունից հանձնվում է ատենախոսության թեմայի հաստատումից հետո:

2. Մասնագիտությունից քննությունը հանձնվում է այն գիտական հիմնարկներում, կազմակերպություններում ՝ բուհերում (այսուհետ՝՝ հիմնարկներ), որոնք ունեն ԲՈՀ-ի թույլտվությունը:

Հիմնարկը ԲՈՀ է ներկայացնում մասնագիտական քննություն ընդունող հանձնաժողովի կազմը՝ հաստատման համար:

Հանձնաժողովը հաստատվում է հետ՝յալ կազմով՝ նախագահ (գիտու- թյան դոկտոր) ՝ 2-4 անդամներ (գիտության դոկտոր ՝ թեկնածու): Մեկ անձը կարող է լինել միայն մեկ հանձնաժողովի անդամ: Հանձնաժողովում կարող են ընդգրկվել գիտնականներ նա՝ այլ հիմնարկներից:

Քննությունը հանձնվում է այն մասնագիտությունից, որով հաստատվել է ատենախոսության թեման՝ ԲՈՀ-ի հաստատած ծրագրով:

Անհրաժեշտության դեպքում կազմվում է լրացուցիչ ծրագիր, որը պետք է ընդգրկի հայցորդի հետազոտությունների ոլորտը կամ գիտության տվյալ բնագավառի ընդհանուր մասնագիտական հարցեր: Լրացուցիչ ծրագիրը մշակվում է համապատասխան ամբիոնում (բաժնում, լաբորատորիայում) ՝ հաստատվում է այն ԲՈՒՀ-ի (ֆակուլտետի), հիմնարկի գիտական խորհրդում, որտեղ ընդունվում է քննությունը:

Այն դեպքերում, երբ հայցորդի բարձրագույն կրթությունը չի համապատասխանում գիտության այն բնագավառին (ենթաբնագավառին), որով

հաստատվել է ատենախոսության թեման, հայցորդը պետք է հանձնի լրացուցիչ քննություն ընդհանուր մասնագիտությունից:

3. Քննությունները փիլիսոփայությունից ՝ օտար լեզվից, ինչպես նա՝ ստուգարքը ինֆորմատիկայից հանձնվում են այն գիտական հիմնարկներում, որոնք ունեն ԲՈՀ-ի թույլտվությունը:

---

* *Ð³ëï³ïí³Í ´àÐ-Ç 27.06.2000Ã., Ñ. 82 Ññ³Ù³Ýáí, ·ñ³Ýóí³Í ÐÐ ²ñ¹³ñ³¹³ïáõÃÛ³Ý Ý³Ë³ñ³ñáõÃÛ³Ý ÏáÕÙÇó 18.07.2000Ã. (Ñ. 30300065):*

Հիմնարկը ԲՈՀ է ներկայացնում քննություն ընդունող հանձնաժողովի կազմը՝ հաստատման համար:

Հանձնաժողովները հաստատվում են հետ՛յալ կազմով՝ նախագահ (գիտության դոկտոր կամ թեկնածու) ՝ 2-4 անդամներ:

Քննությունները ՝ ստուգարքը հանձնվում են ԲՈՀ-ի հաստատած ծրագրերով:

4. Որակավորման քննությունները ՝ ստուգարքը կազմակերպվում են տարեկան երկու քննաշրջաններով (մայիս-հունիս ՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին):

Քննության ՝ ստուգարքի ընթացքում յուրաքանչյուր հայցորդի համար լրացվում է արձանագրություն, որտեղ գրանցվում են քննական հարցերը ՝ քննության վերջնական արդյունքը:

Որակավորման քննությունները գնահատվում են 4 բալային համակարգով՝ «գերազանց», «լավ», «բավարար» ՝ «անբավարար»: Մասնագիտական քննությունը համարվում է հանձնված՝ «գերազանց» կամ «լավ» գնահատականի դեպքում:

Արձանագրությունը ստորագրում են քննական հանձնաժողովի նախագահը ՝ անդամները: Արձանագրությունները պահպանվում են քննություն ՝ ստուգարք ընդունող հիմնարկներում:

Որակավորման քննության ՝ ստուգարքի հանձնման մասին տեղեկանքը տալիս է քննություն, ստուգարք ընդունող հիմնարկը:

5. Որակավորման քննությունը կամ ստուգարքը չհանձնելու դեպքում հայցորդը կարող է այն հանձնել հաջորդ քննաշրջաններում: